# ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

**Համատեղ գործունեություն իրականացնելու մասին**

գ. Արգել «_26_» _մայիսի_ 2026թ.

**«ՍԱՔՇԻՆ» ՍՊԸ-ն**, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, ի դեմս տնօրեն **Ս. Մանուկյանի** (այսուհետ՝ **«Գործընկեր Ա»**) մի կողմից, և **«ԱՇՈՏ ԵՎ ՀԱՅԿ ԵՂԲԱՅՐՆԵՐ» ՍՊԸ-ն**, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, ի դեմս տնօրեն **Լ. Հայրապետյանի** (այսուհետ՝ **«Գործընկեր Բ»**), մյուս կողմից, որոնք այսուհետ համատեղ կկոչվեն **Մասնակիցներ**, կնքեցին սույն համատեղ գործունեության պայմանագիրը (այսուհետ՝ **ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**) հետևյալի մասին.

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Սույն **ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ «Գործընկեր Ա»-ն և «Գործընկեր Բ»-ն**, առանց իրավաբանական անձ կազմավորելու, միավորում են իրենց պատկանող գույքը, նյութական և ոչ նյութական արժեքները, գործարար կապերն ու իրենց ամբողջ ներկազմակերպական ներուժը՝ ստեղծելով **«ԿՈՆՍՈՐՑԻՈՒՄ»**:

1.2 **«ԿՈՆՍՈՐՑԻՈՒՄ»** ստեղծելու նպատակն է՝ **«Գործընկեր Ա»-ի և «Գործընկեր Բ»-ի** փոխհամագործակցությամբ ու միավորված ներուժով իրականացնել **Աբովյանի համայնքապետարանի կողմից հայտարարված «ԱԲՀ-ԳՀԱՇՁԲ-26/89» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հայտարարությամբ նախատեսված աշխատանքները** (այսուհետ՝ **Աշխատանքներ**):

1.3 **«Գործընկեր Ա»-ն** որպես ավանդ ներդնում է ֆինանսական միջոցները, տեխնիկական միջոցները, աշխատանքային ռեսուրսները՝ համապատասխանելով **«ԱԲՀ-ԳՀԱՇՁԲ-26/89» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով** հայտարարված **«Մասնագիտական փորձառություն», «Ֆինանսական միջոցներ», «Տեխնիկական միջոցներ», «Աշխատանքային ռեսուրսներ»** որակավորման չափանիշներին՝ պայմանագրի 1.2 կետում նշված գործունեությունն իրականացնելու նպատակով:

1.4 **«Գործընկեր Բ»-ն** որպես ավանդ ներդնում է **«էլեկտրամատակարարում (էլեկտրամատակարարման, էլեկտրալուսավորման ներքին և արտաքին ցանցեր, էլեկտրամատակարարման համակարգեր, ֆոտովոլտային և հողմաէներգետիկ կայաններ)»** լիցենզիան և դրա շրջանակներում կատարված համանման աշխատանքների կատարված լինելը հավաստող փորձառությունը՝ համապատասխանելով **«ԱԲՀ-ԳՀԱՇՁԲ-26/89» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով** հայտարարված **«Մասնագիտական փորձառություն»** որակավորման չափանիշին՝ պայմանագրի 1.2 կետում նշված գործունեությունն իրականացնելու նպատակով:

## 2. ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՐԾԵՐ ՎԱՐԵԼԸ

2.1 **«ԿՈՆՍՈՐՑԻՈՒՄ»-ի Մասնակիցների** միջև ձեռք բերվեց համաձայնություն առ այն, որ սույն **ՊԱՅՄԱՆԱԳՐԻ** շրջանակներում իրականացվելիք գործունեության շրջանակներում **«Գործընկեր Ա»-ն** հանդես է գալիս որպես **ՀԱՄԱՏԵՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՈՒ ՄԱՍՆԱԿԻՑ** գործընկեր՝ **ՊԱՅՄԱՆԱԳՐԻ** շրջանակներում գործելով **Մասնակիցների** անունից:

2.2 Հիմք ընդունելով սույն **ՊԱՅՄԱՆԱԳՐԻ** 1.1 կետով ձեռք բերված համաձայնությունը, **Մասնակիցները** սահմանում են, որ **«ԿՈՆՍՈՐՑԻՈՒՄ»-ին** պայմանագիր շնորհելու դեպքում բոլոր ֆինանսական գործարքները, դրամական փոխանցումները, Պատվիրատուի հետ փոխադարձ հաշվարկներն իրականացվելու են հիմք ընդունելով **«ԿՈՆՍՈՐՑԻՈՒՄ»-ի** կողմից **Աշխատանքների** դիմաց ներկայացված կատարողական ակտերը, որոնց դիմաց վճարումները կիրականացվեն **«Գործընկեր Ա»-ի** հաշվարկային հաշվին:

2.3 **Մասնակիցների** միջև ձեռք բերվեց համաձայնություն **«ԿՈՆՍՈՐՑԻՈՒՄ»-ի** կողմից ներկայացվող գնման ընթացակարգի հայտը ստորագրվելու է **«Գործընկեր Ա» և «Գործընկեր Բ»** տնօրենների կողմից, իսկ գնման ընթացակարգի հայտը ուղեկցող բոլոր այն փաստաթղթերը, որոնք ներկայացվելու են **«ԿՈՆՍՈՐՑԻՈՒՄ»-ի** անունից, կներկայացվեն **«Գործընկեր Ա» և «Գործընկեր Բ»** միասնական ձևաթղթերով՝

վավերացված վերջիններիս կնիքներով և տնօրենների (կամ նրանց լիազորված ներկայացուցիչների) ստորագրություններով:

2.4 **«ԿՈՆՍՈՐՑԻՈՒՄ»-ի** համատեղ գործունեության ամբողջ ընթացքում **Մասնակիցներից** յուրաքանչյուրը, իր իրավասությունների սահմաններում, ինչպես նաև սույն **ՊԱՅՄԱՆԱԳՐԻ** շրջանակներում իրականացվելիք աշխատանքների կատարման նպատակով միմյանց գրավոր կամ բանավոր համաձայնությամբ իրականացնում են ցանկացած գործառույթ կամ գործողություն, որը կնպաստի **«ԿՈՆՍՈՐՑԻՈՒՄ»-ի՝ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ** սահմանված նպատակների իրականացմանը:

2.5 **«ԿՈՆՍՈՐՑԻՈՒՄ»-ի** կողմերը փոխադարձ համաձայնությամբ կարող են ունենալ իրենց ընդհանուր լիազորված երրորդ անձը:

**3. ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՅՔԸ**

3.1 **ՊԱՅՄԱՆԱԳՐԻ** շրջանակներում **«ԿՈՆՍՈՐՑԻՈՒՄ»-ի** կողմից իրականացվող գործունեության նպատակներին հասնելու համար **«Գործընկեր Ա»-ի և «Գործընկեր Բ»-ի** կողմից կարող է ներդրվել գույքը, որը համարվում է այն տրամադրած Մասնակցի սեփականությունը, եթե **ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ** կամ համատեղ գործունեության ժամանակ որևէ այլ պայմանավորվածություն ձեռք չի բերվել:

3.2 **«ԿՈՆՍՈՐՑԻՈՒՄ»-ի** համատեղ գործունեությունն ապահովելու համար **«ԿՈՆՍՈՐՑԻՈՒՄ»-ի** կողմերը կարող են փոխանցել դրամական միջոցներ դրամով և արտարժույթով, հանձնել գույք, հողի, ջրի, այլ բնական ռեսուրսների, շենքերի, շինությունների օգտագործման իրավունք, այլ գույքային իրավունքներ, կատարել աշխատանքներ և մատուցել ծառայություններ: Ներդրված ավանդի գնահատումը կատարվում է կողմերի համատեղ որոշմամբ:

3.3 **Մասնակիցները** կարող են կայացնել որոշում՝ լրացուցիչ ներդրումներ կատարելու մասին: Այդ որոշումը կայացվում է համատեղ, հետագայում այն պարտադիր է կողմերի համար և հանդիսանում է **ՊԱՅՄԱՆԱԳՐԻ** անբաժանելի մասը:

3.4 Հիմք ընդունելով **ՊԱՅՄԱՆԱԳՐԻ** 2.1 կետը՝ **«ԿՈՆՍՈՐՑԻՈՒՄ»-ի** համատեղ գործունեության կառավարումն ու համակարգումը հանձնարարվում է **«Գործընկեր Ա»-ին**, որը տնօրինում է **Մասնակիցների** կողմից ներդրված գույքը, ղեկավարում **ՊԱՅՄԱՆԱԳՐԻ** գործընթացը և գործունեության նպատակներին հասնելու համար իրականացնում անհրաժեշտ այլ գործառույթներ՝ **ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ** կամ **Մասնակիցների** համաձայնությամբ իրեն լիազորված իրավունքների սահմաններում:

**4. ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

4.1 **«ԿՈՆՍՈՐՑԻՈՒՄ»-ի Մասնակիցների** գնման ընթացակարգի արդյունքում հաղթելու պարագայում Մասնակիցներից յուրաքանչյուրը սահմանված **Աշխատանքների** համար կրում է համատեղ և համապարտ պատասխանատվություն:

4.2 **«ԿՈՆՍՈՐՑԻՈՒՄ»-ի** կողմերը, առաջնորդվելով **ՊԱՅՄԱՆԱԳՐԻ** շրջանակներում հետապնդվող շահերով, միմյանց նկատմամբ որևէ սահմանափակում չեն դնում՝ համատեղ գործունեությանն առնչվող տեղեկատվության փոխանակման, ինչպես նաև գործին առնչվող ցանկացած տեղեկատվության՝ ժամանակին ու պատշաճորեն երկուստեք իրազեկման հարցերում:

4.3 **Մասնակիցներից** յուրաքանչյուրն իրավունք ունի ցանկացած ժամանակ ծանոթանալ **ՊԱՅՄԱՆԱԳՐԻ** շրջանակներում գործերը վարելու բոլոր փաստաթղթերին:

4.4 **«ԿՈՆՍՈՐՑԻՈՒՄ»-ի** կողմերը եկան համաձայնության առ այն, որ **ՊԱՅՄԱՆԱԳՐԻ** շրջանակներում իրականացվելիք համատեղ գործունեության ընթացքում **Մասնակիցները** պարտավորվում են պահպանել իրենց գործունեությանն առնչվող գործարար ու աշխատանքային գաղտնիքները, իսկ դրանց հրապարակման համար կողմերը պատասխանատվություն են կրում՝ հաշվի առնելով ընդհանուր շահերը և յուրաքանչյուր կողմի մեղքը:

4.5 **ՊԱՅՄԱՆԱԳՐԻ** շրջանակներում իրականացվելիք համատեղ գործունեության նպատակով **Մասնակիցների** հատկացրած գույքը վերջիններս իրավունք չունեն միակողմանի տնօրինել կամ դրա հաշվին կատարել իրենց անձնական պարտավորությունները, եթե այլ լրացուցիչ գրավոր համաձայնություն ձեռք չի բերվի **Մասնակիցների** միջև:

4.6 **Մասնակիցները** իրավունք ունեն **ՊԱՅՄԱՆԱԳՐԻ** շրջանակներում իրենց կողմից ներդրված սեփական գույքը օգտագործել իրենց հայեցողությամբ՝ անկախ

**ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ** նախատեսված համատեղ գործունեության նպատակներից, որը սակայն չպետք է խոչընդոտի **ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ** ստանձնած նպատակների իրականացմանը: Նման դեպքերում **Մասնակիցները ՊԱՅՄԱՆԱԳՐԻ** գործունեության ընթացքում պետք է միմյանց տեղեկացնեն նմանատիպ օգտագործման մասին:

4.7 **ՊԱՅՄԱՆԱԳՐԻ** շրջանակներում համատեղ նպատակներին հասնելու համար կողմերը կարող են օգտագործել նաև **ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ** չնախատեսված գույք, նախնական համաձայնության դեպքում վճարելով դրա դիմաց՝ ըստ ձեռք բերված պայմանավորվածության: Այդ դեպքում գույքը մնում է սեփականատիրոջ հաշվեկշռի վրա և չի փոխանցվում **«ԿՈՆՍՈՐՑԻՈՒՄ»-ի** գործունեությունը համակարգող կողմին (**«Գործընկեր Ա»-ին**):

4.8 **ՊԱՅՄԱՆԱԳՐԻ** շրջանակներում համատեղ գործունեության հետ կապված բոլոր ծախսերը կատարվում են և վնասները ծածկվում են **Մասնակիցների** փոխադարձ համաձայնությամբ:

4.9 **ՊԱՅՄԱՆԱԳՐԻ** շրջանակներում համատեղ գործունեության ընթացքում **Մասնակիցները** ցանկացած երրորդ կողմի/կողմերի նկատմամբ ծագած գույքային ու ոչ գույքային հարաբերություններում առաջնորդվում են՝

4.9.1 Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ,

4.9.2 **«ԿՈՆՍՈՐՑԻՈՒՄ»-ի** յուրաքանչյուր կողմի սեփական շահով՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված նորմերի ու գործարար էթիկայի կանոնների շրջանակներում:

4.10 **ՊԱՅՄԱՆԱԳՐԻ** շրջանակներում **«Գործընկեր Ա»-ն** պարտավոր է.

4.10.1 **ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ** ներդրված գույքն ու ֆինանսական միջոցներն օգտագործել **ՊԱՅՄԱՆԱԳՐԻ** նպատակներին և նշանակությանը համապատասխան:

4.10.2 Անհապաղ տեղեկացնել **«Գործընկեր Բ»-ին Մասնակիցների** շահերին սպառնացող ցանկացած հանգամանքների մասին:

4.10.3 **ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ** դադարելուց հետո, պարտատերերի հետ հաշվարկներ կատարելուց հետո **«Գործընկեր Բ»-ին** վերադարձնել ընդհանուր օգտագործման գույքում ունեցած վերջինիս բաժինը, ինչպես նաև **«Գործընկեր Բ»-ի** սեփականությունը հանդիսացող միջոցները:

4.10.4 Պարտաճանաչ ու բարեխիղճ վարել գործերը և կատարել **ՊԱՅՄԱՆԱԳՐԻ** դրույթները:

4.11 **ՊԱՅՄԱՆԱԳՐԻ** շրջանակներում **«Գործընկեր Բ»-ն** պարտավոր է.

4.11.1 Ժամանակին կատարել **ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ** և լրացուցիչ համաձայնություններով նախատեսված իր պարտականությունները:

4.11.2 Մասնակցել համատեղ գործունեությանը և կատարել անհրաժեշտ ծախսեր:

## 5. ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՓՈԽԱԴԱՐՁ ՀԱՇՎԱՐԿՆԵՐԸ

5.1 **ՊԱՅՄԱՆԱԳՐԻ** շրջանակներում համատեղ գործունեության ընթացքում **Մասնակիցներից** յուրաքանչյուրը կրում է ինքնուրույն պատասխանատվություն իր պարտատերերի ու պետբյուջեի հետ առաջացած պարտավորությունների մասով:

5.2 **«ԿՈՆՍՈՐՑԻՈՒՄ»-ի** յուրաքանչյուր մասնակից **ՊԱՅՄԱՆԱԳՐԻ** շրջանակներում իրականացվող համատեղ գործունեության ընթացքում ներդնում է իր բոլոր անհրաժեշտ ֆինանսական, գույքային և ինտելեկտուալ ներուժը:

5.3 **ՊԱՅՄԱՆԱԳՐԻ** շրջանակներում համատեղ գործունեությունն ապահովելու համար **«ԿՈՆՍՈՐՑԻՈՒՄ»-ի** կողմերը կարող են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով առևտրային բանկերից կամ վարկային կազմակերպություններից ստանալ վարկեր կամ փոխառություններ՝ դրանց համար կրելով օրենքով սահմանված պատասխանատվություն: **Մասնակիցները** համաձայնվում են **ՊԱՅՄԱՆԱԳՐԻ** նպատակներին հասնելու համար փոխառություն կամ վարկ վերցնելու դեպքում այն ձևակերպել **Մասնակիցներից** որևէ մեկի անունով, սակայն որպես փոխառության կամ վարկի ապահովման միջոց գրավադրել երկու **Մասնակիցներին** էլ սեփականության իրավունքով պատկանող գույք: Ստացված փոխառության կամ վարկի սպասարկման ծախսերը կողմերը կատարում են իրենց ստանձնած պարտավորություններին համամասնորեն:

**6. ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ**

6.1 **Մասնակիցներից** յուրաքանչյուրը **Աշխատանքների** կատարման պայմանագրի իրականացման համար կրում է համատեղ և համապարտ պատասխանատվություն:

6.2 **ՊԱՅՄԱՆԱԳՐԻ** շրջանակներում **Մասնակիցներից** որևէ մեկ կողմից **ՊԱՅՄԱՆԱԳՐԻՑ** հրաժարվելու հետևանքով մյուս կողմին պատճառված վնասների հատուցումն իրականացվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.3 **Մասնակիցները** պատճառված ռեալ վնասի չափով միմյանց առջև պատասխանատվություն են կրում **ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ** ստանձնած իրենց պարտականությունները ոչ պատշաճ կատարելու դեպքում:

**7. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼԸ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ**

7.1 **ՊԱՅՄԱՆԱԳԻՐՆ** ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է անժամկետ:

7.2 **ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ** կարող է փոփոխվել կամ դադարեցվել՝ չխախտելով Պատվիրատուի հետ կնքվելիք պայմանագրի, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներն ու կարգերը:

**8. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՈՒՄԸ**

8.1 **ՊԱՅՄԱՆԱԳՐԻ** կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով:

8.2 Տաս օրվա ընթացքում բանակցությունների ապարդյուն լինելու դեպքում, **Մասնակիցներից** յուրաքանչյուրը իրավասու է դիմել դատարան ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

**9. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

9.1 **ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ** կազմված է 4 (չորս) էջից, հայերեն լեզվով, կնքվում է երկու օրինակից, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկ օրինակ:

9.2 **ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ** չկարգավորված հարցերը լուծվում են ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ:

**10. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

| «Գործընկեր-Ա» | «Գործընկեր-Բ» |
| --- | --- |
| «ՍԱՔՇԻՆ» ՍՊԸ | «ԱՇՈՏ ԵՎ ՀԱՅԿ ԵՂԲԱՅՐՆԵՐ» ՍՊԸ |
| Կոտայքի մարզ, Արգել 25, Այգետնակ 38 | ք. Չարենցավան 4-րդ թաղամաս 9-րդ շենք բնակարան 5 |
| «ՖԱՍԹ ԲԱՆԿ» ՓԲԸ | «ՖԱՍԹ ԲԱՆԿ» ՓԲԸ |
| Հ/Հ 2623575139321001 | Հ/Հ 2623575139991001 |
| ՀՎՀՀ 03549856 | ՀՎՀՀ 03021795 |
| Տնօրեն՝ Ս. ՄԱՆՈՒԿՅԱՆ | Տնօրեն՝ Լ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ |
| ______________ (ստորագրությունը) | ______________ (ստորագրությունը) |
| Կ.Տ | Կ.Տ |

Digitally signed by MANUKYAN SARGIS 2907911357
Date: 2026.05.26 10:26:58 AMT

Digitally signed by HAYRAPETYAN LIANA 5305820227
Date: 2026.05.26 10:31:54 AMT